ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԻ ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏ

Երգարվեստի պատմության մեջ ընդունված գերագույն աստիճանը **աստվածային ձայն, երկնային ձայն** բնութագրումներն են: Լուսինե Զաքարյանի պարագային գումարվում է նույնքան կարևոր չափանիշ. երգը Լուսինեի համար առաքելություն էր՝ մարդկանց հոգիներում վերահաստատել Ամենաբարձրյալի մոռացված ճշմարտությունը: Նրա հիրավի փայլուն կատարողական արվեստը Աստծո կողմից շնորհված հոգու կանչն է:

Փխրուն, բայց զվարթ մանկական միամտությամբ դերասանուհի դառնալու երազով ապրող աղջնակը բոլորի սիրելին էր: Ընտանիքի պայմանները լավագույնը չէին, բայց ընտանիքը ապրում էր կիրթ ու ազնիվ կյանքով, և Լուսինեն ընտանիքում զգեցավ բյուրեղային մաքրության առաքելությանը: Այդ առաքելությամբ էլ նա մտավ Եկեղեցի, և հոգին հաղորդվեց դարերի հոգևոր մշակույթին և սկսեց հաղորդակցությունը աստվածայինի հետ: Էջմիածնի Մայր տաճարում ձևավորվում է նրա հոգին և հոգևոր երգը մեկնաբանելու մտածելակերպը՝ արժանանալով Նորին Սրբություն Վազգեն Ա Կաթողիկոսի հայրական հոգացողությանը:

Երգչուհու կյանքում շրջադարձային դեր ունեցավ նրա ամուսինը՝ Խորեն Պալյանը, որ եկեղեցական երգարվեստի խորագիտակ ու հմուտ տեսաբան է և կատարող: Ստեղծվեց ներդաշնակ համագործակցություն, և երգը հոսեց դարերի ավանդույթի անխաթար հունով: Լուսինեն ոչ միայն գերեց իր ձայնով, այլ մանավանդ ստեղծեց հոգևոր մթնոլորտ Հայաստանի մայրաքաղաքից սկսած մինչև հեռավոր շրջաններ և աշխարհի բազմաթիվ երկրներ, ուր հայ հոգին ծարավ էր հայ երգին: Թևածեց երգը ամենուր և այդ երգի հիշողությունը այսօր անխախտ հուշարձանն է Լուսինեի կենդանի գոյության:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՌԹԻՎ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ և բարեգութ գթա Քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից Քոց, արա հանգիստ և ողորմութիւն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, հոգեհանգստյան պահն է այս: Հոգեհանգստյան աղոթքի պահ բոլոր մեր ննջեցյալների հոգիների համար: Հատկապես նրանց հոգիների, որոնց հիշատակը այսօր պիտի կատարվի: Հոգեհանգստյան այս պահին կանգնած ենք կյանքի և մահվան առեղծվածի առջև, կանգնած ենք կյանքի և մահվան խորհուրդի առջև՝ մեր մարդկային տկար ուժերով և զգացումներով: Միակ մխիթարությունը գտնում ենք մեր քրիստոնեական հույսի մեջ: Քրիստոնեական մեծ հույսը, որ հոգիները չեն մահանում, որ բոլորի համար՝ մի կյանք է վերապահված, ուրիշ աշխարհում, որին հավատում ենք մենք:

Ահա այս հույսի զգացումով է, որ այսօր պիտի աղոթենք մեր անմոռանալի և աննման Լուսինե Զաքարյանի հոգվույն համար:

Այսօր, անցել են ավելի քան 40 օրեր նրա թաղումից, երբ նրա մարմինը հանձնեցինք մայր հողին Ս. Գայանե վանքի սրբացած հողին: Եվ այսօր ավելի քան 40 օրեր հետո, չգիտեմ ինչպես բացատրեմ իմ ապրումն այս պահում, թե ինչպես կարողացանք բաժանվել Լուսինեից: Կարծեք ինչ որ դատարկություն ստեղծվեց մեր հոգևոր աշխարհում: Մեր ժողովրդի հոգևոր աշխարհում, և ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտասահմանում:

Ես նոր վերադարձա արտասահմանից և բերում եմ այս վկայությունը նաև, որ իրոք Լուսինեն լուսավոր մի ներկայություն էր մեր ժողովրդի կյանքում, մեր ժողովրդի մանավանդ հոգևոր կյանքում՝ թե մեզ մոտ, թե Սփյուռքում: Եվ կրկին նույն ապրումը կունենանք երևի բոլորս, թե ինչպես կարողացանք բաժանվել, ինչպես կարողացանք կորցնել Լուսինեին: Սակայն կարծում եմ, թե ճշմարիտ է այն վկայությունը, թե այդ կորուստի զգացումը, այդ պարապության զգացումը անցավոր է: Եվ հիմա հետզհետե կանդրադառնանք, որ վերջապես բաժանված չենք Լուսինեից: Որ մեր հոգու աչքերով տեսնում ենք նրա ներկայությունը մեր մեջ և լսում ենք նրա ձայնը այս անգամ երկնքից:

Լուսինեն կմնա մեր մեջ, մեզ հետ և մենք միշտ պիտի լսենք նրա անընման ձայնը: Լուսինեն սովորական իմաստով երգչուհի չէր, նրա համար երգը մասնագիտություն չէր, արվեստի գործ չէր միայն, այլ մի աղոթք էր տևական, մի աղերս էր և մի առաքելություն: Այո, կարծեմ ճիշտ եմ օգտագործում բուն բառը: Նրա համար մանավանդ հոգևոր երգը առաքելություն էր մեր ժողովրդի կյանքում:

Մենք այսօր, այս վերջին տարիների ընթացքում վկաներն ենք մեր հայրենի ժողովրդի ազգային, հոգևոր կյանքի վերազարթոնքին: Ես կարծում եմ սխալած չեմ լինի եթե ասեմ, որ քառասուն տարիներ շարունակ Լուսինեն իր երգով, իր հոգևոր երգով և ազգային երգերով կարևոր նպաստ բերեց մեր ժողովրդի հոգևոր զարթոնքը պատրաստելու գործում: Նա գիտակցում էր այն, ես վստահ եմ, ես զգում էի նրա մեջ այդ զգացմունքը տևապես, նա էր խոսում: Նա քաղաքական անձնավորություն չէր, բայց հոգով

ապրում էր մեր ժողովրդի հոգու անանկությունը անցյալում և իր երգով ուզում էր իր լուսո բաժինը բերել, որպեսզի զարթնի այս ժողովուրդը իր քնից: Անավասիկ այսպես է, որ նա իր առաքելությունը շարունակեց տարիներ շարունակ:

Մի օրինակ ուզում եմ վկայակոչել այստեղ: Մոտ քսան տարիներ առաջ ինչ որ իշխանության վերևներից մի հոսանք իջավ, որով փորձեցին արգելել, որ օպերայի և ֆիլհարմոնիայի երգիչ-երգչուհիները երգեն նաև եկեղեցիների մեջ, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ: Ոմանք գուցե վախեցան և համակերպվեցին, բայց մեկ հոգի չհամակերպվեց, դա Լուսինեն էր: Նա ֆիլհարմոնիայի հավաքույթում ոտքի կանգնում և ասում է.—եթե այդպես է, ես կհրաժարվեմ ֆիլհարմոնիայից և կմնամ երգչուհի Ս. Էջմիածնում:

Անա իսկական ոգին արտահայտող մի վերաբերմունք Լուսինեի կողմից:

Այսօր եկեք աղոթենք բոլորս միասին նրա հոգու հանգստության և լուսավորության համար՝ հավերժության մեջ, և ուխտենք հավատարիմ մնալ նրա առաքելության ոգուն ամեն մեկս մեր չափով և մեր միջոցներով: Եվ այս ձևով սուրբ պահենք նրա հիշատակը մեր կյանքում: Մենք մանավանդ, ամեն կիրակի գալիս ենք աղոթելու այս կամարների տակ, ինչպես կարող ենք չհիշել, ինչպես կարող ենք մոռանալ Լուսինեին: Ոչ միայն մենք, այլ այս սրբացած հազարամյա քարերը պիտի հիշեն նրան: Ներծծված են նրանք Լուսինեի քաղցր ձայնով:

Թող Աստված իր Երկնային Արքայության մեջ հավերժական լույսի մեջ պահի նրա հոգին և օրհնյալ լինի նրա հիշատակը երկնքում և երկրում այժմ և հավիտյան:

Ես մի անգամ ևս հիշեցնում եմ այս սուրբ բեմից մեր վշտակցությունը նրա հարազատներին, նրա ամուսնուն, նրա ընտանեկան պարագաներին և ձեզ բոլորիդ, սիրելի ժողովուրդ, գիտեմ, որ բոլորդ եկել եք այսօր նրա հիշատակը հարգելու համար և նրա հոգու համար աղոթելու:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի, այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»: